174
S II·2

№ 1 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 1 — 1889 — ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 1 № 1

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐԿԱՅ 1889 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում Թամամշեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

„Ա Ղ Բ Ի Ւ Ր“

Լոյս տեսաւ № 1. և ուղարկվեց բոլոր բաժանորդներին։ ԱՌԱՆՑ ԲԱՑԱՌՈՒԹԵԱՆ չուղարկվեց անցեալ տարվայ այն բաժանորդներին, որոնք դեռ չեն վերանորոգել իրանց բաժանորդագրութիւնը։ Պրէմիա չեն ստանայ նրանք, որոնք 28 կ. փոստի մարկա չեն ուղարկի։ Շարունակվում է «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդագրութիւնը։

«ՄՇԱԿԻ» ներկայ համարը բաղկացած է ՄԷԿ ԵՒ ԿԷՍ թերթից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անցած տարվայ հաշիւը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր ժամանակակից գրականութիւնը. Պետրոս Ադամեանի յօբելեանը. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ԲՕՐՍԱ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ակնարկներ.

ԱՆՑԱԾ ՏԱՐՎԱՑ ՀԱՇԻՒԸ

—

Ամեն տեղ ընդունված է, սկսած պետական հաստատութիւններից մինչև մանաւոր ամեն տեսակ ընկերութիւնների ու մամուլի օրգանները, տարեմուտին հաշիւ տալ՝ թէ ի՞նչ է կատարված եղել անցած տարվայ ընթացքում....

Եթէ մենք, հայերս, ուզենայինք այդ օրինակին հետևել և հաշիւ տալ այն բոլորի մասին, որ կատարվել է մեր մէջ,—հաշիւ թէ կարող կը լինէինք կատարված, շօշափելի և դրական իրողութիւնների մի շարք ցոյց տալ, այլ ստիպված կը լինէինք աւելի խօսելու չը կատարված իրողութիւնների մասին, այսինքն պէտք է խօսէինք մեր գործունէութեան բացասական կողմի մասին, այն իրողութիւնների մասին, որոնք պէտք է կատարվեն, բայց չը կատարվեցան....

Երբ հայ հրապարակախօսը, հայ գործիչը նոր տարվայ առաջին օրը վստահանում է հանդէս դուրս գալ անցած տարվայ ընթացքում բուն հայոց կեանքի մէջ կատարված իրողութիւնների մասին հասարակութեանը հաշիւ տալու համար,—նա տխուր սրտով պէտք է խոստովանվի որ կատարվածը շատ քիչ է եղել, իսկ չը կատարվածը՝ անթիւ։ Նա պէտք է խոստովանվի, որ մխիթարական համարեա ոչինչ չէ եղել մեր կեանքում, իսկ անմխիթար երևոյթներ, որոնց կարելի է արձանագրել՝ անթիւ անհամար են եղել....

Կարելի է արդեօք ասել որ մեր դպրոցական կեանքում անցեալ 1888 թուի ընթացքում որ և է առաջադիմութիւն է նշմարվել, որ դպրոցները այս կամ այն կերպ կարգաւորվել են, կամ որ դպրոցների եղած թիւը գէթ մէկով աւելացել է,—ոչ։

Կարելի է արդեօք ասել որ մեր մամուլը անցեալ տարվայ ընթացքում թէ բովանդակութեան, թէ ուղղութեան, թէ բաժանորդների թուի կողմից առաջադիմել է,—ոչ։ Շատ շատ կարելի է ասել որ հայոց օրգանների թիւը մի քանի հրատարակութիւններով աւելացել է, որոնցից մի երկու կամ երեք հատ արտասահմանում և մի ամսագիր Ռուսաստանում։

Կարելի է արդեօք ասել, որ անցեալ 1888 թուի ընթացքում թէ Ռուսաստանում և թէ Թիւրքիայում գէթ մի հատ նշանաւոր, աչքի ընկնող գիրք է հրատարակվել հայերէն լեզուով,—ոչ։ Կարելի է արդեօք ասել որ նոյն տարվայ ընթացքում նոր գրողներ են յայտնվել մեզանում,—ոչ։ Ընդհակառակն, սրտի ցաւով պէտք է արձանագրել երկու եղած յայտնի գրողների կորուստը։

Կարելի է արդեօք պնդել որ անցեալ տարվայ ընթացքում հայ հասարակութիւնը թէ մեզանում և թէ կ. Պոլսում, ըմբռնելով ընկերակցութիւնների օգուտը, որ և է առաջադիմական քայլ արաւ նոր ընկերութիւններ հիմնելու կամ եղած ընկերութիւններ պահպանելու գործում,—ոչ և դարձեալ ոչ։ Մեր եղած բոլոր ընկերութիւնները քանի գնում՝ ընկնում են և իսպառ կորցնում են ժողովրդի աչքում իրանց հեղինակութիւնը, իսկ նորերը այս անցած տարվայ ընթացքում ամենևին չեն հիմնվել։

Կարելի է արդեօք ասել որ մեր թատրոնը այս անցած տարվայ ընթացքում ծաղկած դրութեան մէջ էր,—ոչ։ Ընդհակառակն, թատրոնական գործի թաղման հանդէսն ենք կատարել թէ Թիֆլիսում և թէ ամեն տեղ, որտեղ կան հայերը։ Ոչ նոր գրող, ոչ թատրոնական նոր ոյժեր, ոչ նոր բեմ ունեցանք, ընդհակառակն եղածն էլ կամ կորցնելու վրա ենք, կամ արդէն կորցրինք։

Կարելի է արդեօք ասել որ մեր տնտեսական կեանքը որ և է շօշափելի առաջադիմութիւն արաւ անցեալ 1888 թուի ընթացքում,—ոչ։ Արդեօք հայ կապիտալիստները ձեռնարկեցին, բացի նաւթային գործերից, երկրի համար որ և է օգտաւէտ և իրանց համար շահաւէտ տնտեսական, արդիւնագործական, երկրագործական ընդարձակ ձեռնարկութեան, որով կարող էին ծաղկեցնել երկրիս որ և է հարուստ արդիւնաբերութիւնը, մշակել և արտահանել Անդրկովկասի հարուստ բերքերից մէկը,—ոչ։ Արդեօք կազմվեց հաստատ հիմքերի վրա որ և է արդիւնագործական ընկերակցութիւն,—ոչ։ Ուր մնայ մեր ցորենի արտահանութիւնը, ի՞նչ եղաւ մտադրված գինեգործական ընդարձակ ընկերակցութիւնը, ում ձեռքն անցաւ Երևանի նահանգի բամբակի շահաւէտ մշակութիւնը և այլն.... Արդեօք մեր երկրի ռամիկ երկրագործ ազգաբնակութիւնը գէթ մի քայլ արաւ ըմբռնելու համար գիւղական արդիւնագործական ընկերակցութիւնների անհրաժեշտութիւնը, խնայողական արկղների ու հայի ամբարների օգուտը, կամ վերջապէս համայնքի հաշուով՝ համայնական հողերի գնելը։ Արդեօք հասկացաւ այդ նոյն գիւղական ազգաբնակութիւնը խելացի, խնայողական երկրագործութեան օգուտը, կամ իր ապրուստի պակասը լրացնելու համար ձմեռվայ ամիսներում ամեն տեսակ անային արդիւնաբերութիւններին ձեռնամուխ լինելու անհրաժեշտութիւնը,—ոչ, ոչ և դարձեալ ոչ։

Արդեօք հասկացանք մենք անցեալ տարի որ համերաշխութեան գաղափարը՝ հասարակական անպայման հարկաւոր ըսկզբունք է։ Արդեօք հասկացանք մենք որ ձգնաժամի, ազէտի ժամանակ հարկաւոր է փոխադարձը օգնութիւն, նոյն իսկ խելացի եսականութեան սկզբունքի տեսակէտից։ Արդեօք, բացի երեք, չորս անհատներից, որոնք վերջին օրերս նիւթապէս օգնութեան ձեռք մեկնեցին կարօտեալներին, հասարակութեան մեծամասնութիւնը ըմբռնեց ընկերովի գործելու հասարակաօգուտ և հասարակաշէն ըսկզբունքը,—ոչ, և դարձեալ ոչ։

Արդեօք անցեալ տարին մի որ և է դրական հիասթափվում են....

—

Թող ներվի ինձ կարծել,—չէ որ ներկայ ժամանակում ամեն մարդ իրաւունք ունի կարծիք ունենալ,—որ հէնց այդ հանրամարդկային հիասթափմամբ կարելի է բացատրել այն ըէակցիան, որը այժմ նշմարվում է ոչ թէ միայն մեզ նման «ի վաղուց անտի» յետադէմ ազգի, այլ և շատ առաջադէմ և քաղաքակրթված համարվող ազգերի մէջ։

Վերցրէք ինչ տեսակ հասարակական խնդիր և կամենաք, լինի դա վարչական, քաղաքական, տնտեսական թէ սոցիալական, մի և նոյն է ամեն տեղ ըէակցիա է նշմարվում, և այդ ոչ թէ այնպիսի երկիրներում, ինչպէս է մեր հարեւան քնթամթաչ Պարսկաստանը, կամ ուժաս

բական, շօշափելի մխիթարութիւն բերեց Թիւրքայ Հայերին իրանց ներքին կեանքի բարւոքման գործում,—ոչ։

Արդեօք մեր նոր սերունդը, մեր լուսաւորված, կրթված դասակարգը, մեր ինտելիգէնցիան անցեալ տարվայ ընթացքում արթնացաւ իր մշտական քնից, արդեօք փոխեց նա մազի չափ իր գործնական, անձնական, եսական ընթացքը և ցոյց տո՞ւեց ամենափոքր ձգտում դէպի հասարակաց անձնուէր գործունէութիւնը, մի քայլ ա՞ռաւ նա դէպի պարտաճանաչութիւնը, արդեօք երևա՞ց նրա մէջ իր հասարակաց կոչման ինքնաճանաչութեան նշոյլն անդամ, արդեօք ջանք արաւ նա ըմբռնելու համար իր կոչման բարձրութեան նշանակութիւնը,—ոչ, ոչ և դարձեալ ոչ։

Արդեօք մեր երկրի ո՞ր հիմնարկութիւն կամ հաստատութիւն, լինի դա քաղաքային վարչութիւն, կամ ժողովրդից ընտրված խորհուրդ, լինի դա մի որ և է բարեգործական ընկերութիւն, մի դրամատուն, կամ մի ուսումնական ընկերութիւն, ապացուցեց մեզ որ անցեալ տարվայ ընթացքում կատարեալ քաղաքացիական հասունութեան էր հասել, արդեօք այդ տեսակ հաստատութիւններից մէկը, այս կամ այն դէպքում, տուեց մեզ քաղաքացիական այրութեան որ և է ապացոյց,—ոչ....

Արդեօք կարող ենք պարծենալ որ անցեալ տարվայ ընթացքում մեր հասարակաց կարծիքը հասունացել էր և որ մենք վերջապէս սովորեցինք արժանաւորապէս պատժել անպիտան արարքները, դրոշմել խայտառակութեան դրոշմ հասարակական ամեն տեսակ զեղծումներին,—ոչ....

Եւ այդպիսով, որ կողմն էլ նայենք, անցեալ տարվայ տեսութիւնն անելով և ուշադրութիւն դարձնելով ինքներս մեզ անկեղծ հաշիւ առնելով մեր բոլոր արածների մասին,—տխրութեամբ ստիպված ենք խոստովանվել, որ մեր ամբողջ կեանքի մէջ աչքի ընկնող մխիթարական ոչ մի երևոյթ չունենք արձանագրելու։

Մուտք գործելով նոր տարեշրջանը,—անկեղծաբար ստիպված ենք խոստովանվել որ ոչ մենք ինքներս, ոչ էլ մեր ապագայ սերունդները ոչինչ չենք ունենայ սովորելու, դաս առնելու անցեալ 1888 թվի մեր անցոյն, ապարդիւն, նոյն իսկ բացասական գործունէութիւնից։

Ցանկանք, այ՛ո, որ սկսվող տարին աւելի արդիւնաւոր լինի, քան անցածը, յուսանք որ սկսվող տարվայ ընթացքում մեր գործերը ոչ թէ բացասական, այլ դրական բնաւորութիւն կունենան,—բայց մի և նոյն ժամանակ չենք կարող ծածկել մեր թերահաւատութիւնը, և երկիւղ ենք կրում որ չարաչար կը սխալվենք և որ մեր ցանկութիւնն ու յոյսը ունայն կը լինեն։

Գ. Ա.

կան-հայ ընթերցողները։—Այդ ճշմարիտ է, կը պատասխանեմ ես, բայց ես այն պատճառով եմ հեռու տեղերից օրինակ բերում, որ ինձ չը մեղադրեն կողմնապահութեան և անձնական հաշիւների մէջ։

—Ի՞նչ կողմնապահութիւն, ինչ անձնական հաշիւ, կը բացականչեն միամիտ ընթերցողները։

—Ահա թէ ինչ։ Այս օրերս ես առիթ ունեցայ լսելու երկու հայ ընթերցողների վիճաբանութիւնը։ Նրանցից մէկը, (որ անկասկած մի յայտնի տեսակի հայ թերթերի ընթերցող պիտի լինէր) պնդում էր, որ «Մշակը» շատ է յարձակվում Բուլանժէի վրա (ասում են որ Բուլանժէի անունը այժմ մինչև անդամ Էջմիածնի վանքի խուցերումն էլ յայտնի է) և կը նշանակի ուրեմն «Մշակի» խմբագիրը կամ խմբագրութեան անդամներից մէկը որ և է անձնական թշնամութիւն ունի Բուլանժէի հետ։ Իսկ միւսը պատասխանում էր, որ դժուար է հաւատալ այդ բանին, որովհետև Բուլանժէն շատ հեռու է, և նրա ու «Մշակի» խմբագրութեան մէջ դժուար թէ որ և է կապ լինի....

Ահա, թէ ինչու, ընթերցող, ես տրամադրված եմ հեռու երկրների վրա էլ մատնանիշ անել այս անդամ... և ուզում եմ օրինակներ բերել Ամերիկայից ու Անգլիայից։

—

Բայց դառնանք մեր հարցին։

Միթէ ըէակցիա չէ, որ Միացեալ-Նահանգներում ռամկապետական կուսակցութեան ձեռքից կառավարութեան ղեկը դուրս է գալիս, և ռամկապետականները, իրանց բոլոր սիստեմաներով, ըեֆորմային նախագծերով և Կլեվելենդով ընկնում են, և նրանց տեղ կառավարութեան ղեկը իր ձեռքն է առնում Հարրիսոն իր կուսակցութեամբ, որի դրօշակի վրա գրած է «պրոտեկցիոնիզմ» և որը պլուտոկրատիայի ձեռքը պէտք է տայ ամբողջ երկիրը՝ դրա հիւթը ծծելու համար....

Ըէակցիա չէ, ապա ինչ է, որ Գլադստոն իր կողմնակիցներով ընկնում է, իրլանդական հարցը արխիվն է տրվում, և հանդէս է գալիս Սալիսբրիի պահպանողական մինիստրութիւնը իր հնացած և սկզբունքով վնասակար ճանաչված սիստեմաներով։

Ըէակցիա չէ ապա ինչ է, որ այսօր, Ֆրանսիան, այն Ֆրանսիան որ դեռ շատ լաւ է յիշում Նապոլէոններին և Բուրբոններին, հարիւր տարուց ի վեր արիւն է թափում «դիկտատորներից» ազատվելու համար, այսօր օվալիաներ է անում մի այնպիսի մարդու՝ ինչպիսին է Բուլանժէ, և իր այդ վարմունքով այնտեղ է հասել, որ Ֆրանսիայի մայրաքաղաքի մէջ բուլանժականութիւնը համարձակվում է պատերազմ յայտնել հանրապետութեան ներկայացուցիչներին։

Ըէակցիա չէ ապա ինչ է, որ ազատ վաճառականութեան սիստեմայի և համամարդկային կուլտուրայի համար ներքողներ կարդացող Եւրոպայում այսօր պետութիւնները միմեանց դէմ մաքսային կռիւ են յայտնել, միմեանց ջիգրու մաքսերը աւելացնում են, նոր մաքսեր են նշանակում, և նոր մաքսերի հետ միասին աւելացնում են իրանց զօրքերի և զօրանոցների թիւը։ Եւ գուցէ մարդկութեանը գաղափարներ տուող Գերմանիան կը հրձվի և կը հիանայ, եթէ իշխան Բիսմարկ մի օր կառաջարկի հայրենիքի ապահովութեան համար Գերմանիան մի հաստ պատով բաժանել Ֆրանսիայից և այդ պատի վրա մէկը միւսից մի սաժէն հեռաւորութեամբ պրուսացի զինուորներ կանգնեցնել....

Վերջապէս ըէակցիա չէ, ապա ինչ է, որ մինչ մի կողմից գիտութիւնը արիւն քրտինք է թափում յօդուտ մարդկային խաղաղ կուլտուրայի, միւս կողմից եւրոպական լուսաւոր պետութիւնները պարծենում են իրանց զօրքի թւով, իրանց զօրանոցների շատութեամբ, վառօդի ու հրացանների պաշարով և ամրոցների անմատչելիութեամբ....

Դրանից էլ ինչ աւելի մեծ ըէակցիա և ինչ մեծ հակասութիւն դաղափարի, գիտութեան և իրական կեանքի մէջ....

—

Զարմանալին այն է, որ այդպիսի հակասութիւններ և ըիակցիա նկատվում է ոչ թէ միայն այնպիսի հարցերում, որոնք, դիպլոմատների լեզուով խօսելով, քաղաքական մեծ նշանակութիւն ունեն, և իբրև թէ մի ազգի շահերը պաշտպանում են միւս ազգի դէմ, այլ և այնպիսի հարցերում, որոնք սկզբունքով վաղուց վճռված են համարվում.... Թողնենք օտարինը։ Վերցրէք հայոց կեանքում ինչ հարց և կամենաք։

Նայեցէք ձեր շուրջը, մտէք ընտանիք, գնացէք դպրոց, պատեցէք հասարակութեան մէջ, խօսեցէք ամեն շրջանի, ամեն դասակարգի մարդու հետ, և դուք նոյն երևոյթին կը հանդիպէք,—ըսկզբունքը մնում է մեռած սկզբունք, գաղափարը՝ մեռած գաղափար, և իրականութեան մէջ ամեն բան հակառակն է լինում....

Թողնենք տգէտ և անկիրթ ժողովրդին, նայենք կրթվածների վրա։

Ահա ձեզ մի կրթված հայր, որ քարոզում է թէ աղջկան «զօռով» սրա կամ նրա հետ չէ կարելի ամուսնացնել, բայց միայն կեանքի մէջ նա ինքն հակառակն է անում։

Մեր կրթված օրիորդը շատ լաւ գիտէ, որ ինքը ծնված չէ ուրիշի զուարճութեան առարկայ լինել, ու գիտէ, որ կինն էլ մարդ է, գիտէ որ «տուրնիւրը» ծիծաղելի է, իսկ «կօրսէտը» վնասակար։ Այդ ճիշդ է սկզբունքով, բայց ինչ ենք տեսնում կեանքի մէջ....

Համալսարանական երիտասարդը, քաղաքական, տնտեսական և գիտնական հարցեր վճռող երիտասարդը, խօսում է կնոջ ազատութեան, և փոխադարձ սիրոյ վրա հիմնած ամուսնութեան մասին, նայ դուշում է. «լրբութիւն է օժիտ պահանջելը, մարդուն կին է հարկաւոր և ոչ թէ փող»։... Բայց նոյն մարդը՝ իբրև փեսացու աղջկա տէրերի հետ սակարկութիւն է անում....

Ահա դալիս է մեզ մօտ Պետերբուրգից, Մոսկվայից կամ Փարիզից մի տաքգլուխ, մի իդէա-

---

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Այս րոպէիս, երբ մենք գրում ենք այս տողերը, մեր առաջ, խմբագրատան սեղանի վրա, դարսած են ժամանակակից հայոց գրականութեան մի տարվայ բոլոր արտադրութիւնները, բոլոր այն ինքնուրոյն և թարգմանական գրքերը, որոնք լոյս են տեսել ամբողջ 1888 թուականի ընթացքում, թէ Ռուսաստանի մէջ, թէ Թիւրքիայում և թէ Եւրոպայում։

Գրքերի այդ փոքրիկ կոյտը կազմում է մի տարվայ ամբողջ հայոց գրականութիւնը....

Տարվայ վերջում կամենալով մի ընդհանուր հայեացք ձգել հայոց գրականութեան մի տարվայ հարստութեան վրա, մենք մտադրութիւն չունենք կանգ առնելու ամեն մի գրքի վրա, և չենք էլ ցանկանում խօսել այն մասին, թէ գրականութեան որ ճիւղը աւելի հարուստ է և որ ճիւղն է պարունակում իր մէջ աւելի յայտնի աշխատութիւններ։

Տարվայ ընթացքում «Մշակի» մէջ լոյս են տեսել մատենագրական նկատողութիւններ այդ բոլոր գրքերի մասին,—և այդ պատճառով առանց կրկնելու նոյնը, մենք այս անդամ մի քանի խօսք ենք ուզում միայն ասել ընդհանրապէս այն ուղղութեան մասին, որը ամենից աւելի է սկսել աչքի ընկնել ժամանակակից հայոց գրականութեան մէջ...

Այդ աչքի ընկնող ուղղութիւնը, որը սկսել է աւելի ուշադրութիւն դրաւել և որը իբրև մի կարմիր գիծ աչքի է ընկնում լոյս տեսած աշխատութիւններից շատերի մէջ,—դա ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան ձգտումն է...

Տարիներով արդէն անընդհատաբար պրոպագանդա էր լինում ժողովրդի և երկրի կեանքի ուսումնասիրութեան անհրաժեշտութեան մասին, և այդ պրոպագանդան, ուրախալի է խոստովանել, ապարդիւն չը մնաց։

Եւ այսօր հայոց գրականութիւնը, իր խղճուկ և սահմանափակ դրութեամբ՝ սկսել է թեքվել դէպի այդ կողմը, սկսել է իր նիւթը վերցնել ժողովրդի միջից, սկսել է իր հարստութիւնը ժողովրդի իրական կեանքի մէջ որոնել, վերջապէս սկսել է լոյս հանել և բանալ այդ նոյն ժողովրդի առօրեայ կեանքը, նրա աշխարհայեցողութիւնները, նրա լաւ և վատ ձգտումները, նրա իդէալները....

Տարուց տարի նկատվում է, թէ ինչպէս հայագիտ աշխարհայեցողութեան վրա ծանրացած կրօնական մթնոլորտը, որը նոյն իսկ մինչև 60-ական թուականները իր ազդեցութիւնը տարածել էր և հայկական մտքի և գրականութեան ստեղծագործութիւնների վրա, որը կազմում էր ամեն մի հայ գրողի, բանաստեղծի և մտածողի խորհրդածութիւնների ու ստեղծագործութիւնների գլխաւոր, և աչքի ընկնող գոյնը, այժմ զգալի կերպով տեղ է տալիս մի նոր, աւելի թարմ, աւելի կենսական, և աւելի իրական ուղղութեան, որը իր ըսկիզբը առնում է ժողովրդի իրական կեանքի մէջ, և նոյն կեանքի մէջ էլ պէտք է ստանայ իր վախճանը....

Հայոց գրականութեան մէջ տիրապետող միակողմանի, վերացական և սխալ այդ ուղղութիւնը, կրկնում ենք, արդէն մօտեցել է իր հոգեւարքին, և նրա տեղ բռնում է այն կենդանի ուղղութիւնը, որը մի կողմից ուսումնասիրելով ժողովրդի կեանքը, աշխատելով լուծել այդ ժողովրդի կեանքի իրաւաբանական, տնտեսական, բարոյագիտական, ամուսնական, ընտանեկան և հասարակական ամեն տեսակ բարդ խնդիրները, միւս կողմից աշխատում է արծարծել ժամանակակից քաղաքակրթութեան այն ընդհանուր մտքերը, որոնցից մի ժամանակ խորշում էր նոյն իսկ մեր գրականութիւնը, և որոնք պէտք է վերջի վերջոյ պատուաստվեն մեր երկրում, ոչ թէ միայն հայի, այլ և հայի հետ իբրև հարևան ապրող՝ վրացիների, թուրքերի և պարսիկների կեանքին....

Խոստովանում ենք, այդ ուղղութիւնը դեռ իր մանուկ հասակի մէջ է, և նրա ազդեցութիւնը շատ էլ զօրեղ չէ, քանի որ ինքն հայոց գրականութիւնը, որի մի տարվայ բոլոր արտադրութիւնը գրքերի մի փոքրիկ կոյտ է ներկայացնում միայն, նոյնպէս շատ աղքատ և դեռ մանուկ է, բայց անպայման ուրախալի է, որ այդ ուղղութիւնը արդէն ձեւակերպվել է, արմատ է բռնել և աճում է...

Նա կաճի և ապագայում դեղեցիկ պտուղներ կը տայ....

Խ. Մ.

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Վերջապէս կ. Պոլսի հայ հասարակութիւնը, երիտասարդութեան նախաձեռնութեամբ, վճռեց ծօնել մեր տաղանդաւոր դերասան՝ Պետրոս Ադամեանի բեմական գործունէութեան քսանհինգամեայ յօբելեանը։

Չենք թաղցնում, որ մենք սկզբում կասկածով էինք վերաբերվում Պոլսի մամուլի մէջ, յատկապէս «Արևելքում» յայտնված այդ ցանկութեանը. մենք տրամադրված էինք ենթադրելու, որ այդ բանն էլ կը մնայ լոկ ցանկութիւն և լոկ խօսք։

Բայց չենք կարող չուրախանալ, որ Պոլսի երիտասարդութիւնը արդէն վճռականապէս ձեռք է առել տաղանդաւոր արտիստի յօբելեանի գործը, թէև, ինչպէս երևում է Պոլսից մեզ հասած տեղեկութիւններից, յօբելեանի համար կազմված յանձնաժողովի համար անդամ մութ է այն հարցը, թէ ինչպէս, ինչ ձևով և ինչ եղանակով պէտք է ծօնել այդ յօբելեանը....

Անկասկած յանձնաժողովը կը կարողանայ միջոցներ որոնել և այնքան հնարագէտ կը լինի, որ Ադամեանի յօբելեանի ծօնախմբութեանը կը տայ վայելուչ և աղդու կերպարանք, որպէս զի այդ «յօբելեան» կոչված հանդէսը լոկ մի ճաշկերոյթ, և լոկ մի ճառախօսութեան առիթ չը լինի, այլ մի յայտնի տպաւորութիւն ունենայ հասարակութեան վրա, թողնի բարոյական մի ազդեցութիւն, և համոզէ իրան տաղանդաւոր դերասանին՝ թէ իր հայրենիքն էլ գիտէ գնահատել տաղանդը և մայրենի բեմը....

Կատարեալ աջողութիւն ցանկանալով կ. Պոլսի երիտասարդութեան այդ համակրելի ձեռնարկութեանը և Ադամեանի յօբելեանի կատարելուն, որը լրանում է հէնց այն ժամանակ, երբ մենք էլ պատրաստված էինք ծօնելու մեր տաղանդաւոր թատերագրողի՝ Գաբրիէլ Սունդուկեանի բեմական-գրական արժանաւոր գործունէութեան քսանհինգամեայ յօբելեանը, չենք կարող չը փափագել, որ ռուսահայերն էլ մասնակցեն Ադամեանի յօբելեանը ծօնելուն։

Ռուսահայերը լաւ են ճանաչում Ադամեանին։ Ամենքը Թիֆլիսում յիշում են, անկասկած, հայոց թատրոնի այն փառաւոր շրջանը, երբ Ադամեան հոգի էր ներշնչում գործին։ Եւ ոչ թէ միայն Թիֆլիսում, այլ նոյն իսկ ամբողջ Կովկասում անտարակոյս դեռ շատ վառ է այն համակրութիւնը, որով մեր ժողովուրդը վերաբերվել է տարիների ընթացքում դէպի Ադամեանի տաղանդը և նրա բեմական գործունէութիւնը։

Եւ այդ նոյն հասարակութիւնը, անկասկած, կը շտապի իր համակրութիւնը արտայայտել տաղանդաւոր դերասանին նրա յօբելեանի առիթով զէթ չնորհաւորական հեռագիրներով, ուղերձներով, ընծաներով և նամակներով։

Մեզ թւում է, որ մեր երիտասարդութիւնը թէ Թիֆլիսում և թէ գաւառներում, չի մոռանայ իր այդ պարտքը, իսկ Թիֆլիսի հայոց քայքայված դերասանական խումբը չը պէտք է մոռանայ Ադամեանի յօբելեանի առիթով մի առանձին ներկայացում տալու, որով յարդած կը լինի տաղանդաւոր պաշտօնակցի գործունէութիւնը և անունը։

Մենք հաւատացած ենք, որ ռուսահայերի մասնակցութիւնը տաղանդաւոր դերասանի յօբելեանի գործում, անկասկած մեծ ոգևորութիւն կը ներշնչի Ադամեանին, նորից ապացուցանելով որ ճշմարիտ տաղանդը չի մոռացվի երբէք և ոչ մի տեղ։

*

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս ամեն տարի, այնպէս էլ այս տարի «Մշակի» խմբագրութիւնը չէ ուղարկում տարվայ առաջին համարը ոչ Թիֆլիսի, ոչ էլ գաւառական հին բաժանորդներին, որոնք չեն նորոգել իրանց բաժանորդագրութիւնը։

—

‹Մշակի› առաջին համարը հրատարակում ենք այսօր, յունվարի 1-ին, մեկ ու կես թերթի մեծութեամբ։ ‹Մշակի› երկրորդ համարը, ինչպէս անցեալ տարիներն էլ արել ենք, կը հրատարակենք հիգշաբթի, յունվարի 5-ին, իսկ երրորդ համարը՝ երեքշաբթի, յունվարի 10-ին։ Այնուհետև համարները կը հրատարակվեն իրանց սովորական կարգով։

—

Փոթիաբնակ պ. Կարապետ Պօպով ուղարկել է մեր անունով, Յովհաննեան եղբայրների բանկի միջոցով՝ 500 բուբլի, որ պարոնը նուիրում է Թիֆլիսի աղքատ բնակիչների օգտին։ Այդ գումարը, նուիրողի ցանկութեամբ պէտք է բաժանվի Թիֆլիսի աղքատ ազգաբնակութեան՝ առանց խտրութեան ազգութեան և կրօնի։ Պ. Պօպով մեր կամքին է թողնում այդ փողը, ինչպէս կամենում ենք բաժանելու, կամ յանձնելու քաղաքային ուպրավային, Բարեգործական ընկերութեանը և այլն։ Մենք յիշեալ 500 բուբլին արդէն յանձնեցինք Թիֆլիսի քաղաքային վարչութեանը, որպէս զի նա բաժանի այդ փողը քաղաքիս աղքատներին իր անդամների միջոցով։

—

Մեզ ասում են որ ծաղիկ և քութէշ (սկարլատինա) տարափոխիկ ցաւերը սկսել են պակասել Թիֆլիսի մանուկների մէջ։ Այն մեր բժիշկները, որոնք հետևելով դիտութեան վերջին խօսքին, նստացնում են հիւանդ երեխաներին, նոյն իսկ սաստիկ ջերմի ժամանակ, տաք վաննայի մէջ (ջուրը լինում է ոչ պակաս քան 28 աստիճան տաքութիւն, Ռէօմիւրի ջերմաչափով) մեծ մասամբ փրկում են մանուկներին։ Իսկ այն բժիշկները, որոնք չեն կարող աղատվել հին նախապաշարմունքից իբր թէ ջերմի ժամանակ չը պէտք է լողացնել հիւանդին, կամ նրանք, որոնք փոխանակ տաք վաննա նստեցնելու այնքան տգէտ են, որ լողացնել են տալիս հիւանդներին, ոչ թէ 28 և աւելի մեծ տաքութիւն ունեցող ջրի մէջ, այլ 28-ից պակաս, ուրեմն դրեթէ սառն ջրի մէջ,—սրանց չէ աջողվում փրկել մանուկներին։

—

ԲԱԳՈՒԻՑ պ. Ն. Մարտիրոսեանից ստացանք 10 բուբլի։ Այդ փողով պարոնը խնդրում է մեզ ուղարկել ‹Մշակի› այս տարվայ մի օրինակ որ և է հայոց դպրոցին։ Մենք յատկացնում ենք պ. Մարտիրոսեանի անունից ‹Մշակի› մի տարեկան օրինակը Վերին-Ագուլիսի իգական դպրոցին։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. ‹Առաջիկայ 1889 թվին այստեղ պիտի հրատարակվի նոր օրաթերթ մը, ‹Փարոս› անուամբ, խմբագրութեամբ փաստաբան պ. Աւետիս Սուրէնեանի։›

—

Գաւառներից, թատերագրող Գաբրիէլ Սունդուկեանի յօբելեանի տօնելու առիթով մեզ գրում են, որ Ալէքսանդրօպոլում դեկտեմբերի 22-ին խաղացված է ‹Քանդած օջախ›, Երևանում՝ ‹Պէպո›, և Երևանից ու Կարսից, ինչպէս և ուրիշ շատ տեղերից շնորհաւորական հեռագիրներ են ուղարկված յօբելեարին։

—

Մեզ գրում են Կ. Պոլսից հետևեալը. ‹Մասիս› շաբաթաթերթը որ ամսէ մը ի վեր կը հրատարակուէր պ. Արփիար Արփիարեանի խմբագրութեամբ, կառավարական հրամանաւ դադրեցաւ, իբր հակառակորդ Պատրիարքարանի։›

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դեկտեմբերի 30-ին կայացած նիստում քննվեց ընկերութեան և այդեղործական դպրոցի 1889 թվի նախահաշիւը։ Թողնելով մանրամասնութիւնները յաջորդ համարին, աւելորդ չենք համարում հաղորդել, որ ընկերութեան մուտքը ծախսից աւելի է, բայց դրա հակառակ այդեղործական դպրոցը մօտ երկու հազար դէֆիցիտ պիտի ունենայ, և այդ դէֆիցիտը ծածկելու համար, նա դիմում է ընկերութեանը, որի նիւթական միջոցները, ընդհանրապէս նախանձելի չեն։

—

Կ. Պոլսից մեզ հասած տեղեկութիւններին նայելով, դերասան Ադամեանի յօբելեանի տօնախմբութիւնը պիտի կատարվէր դեկտեմբերի 30-ին։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց ‹Театръ въ Тифлисѣ съ 1845—1856 годъ› (‹Թատրոնը Թիֆլիսում 1845—1856 թուականը›) վերնագրով։ Գրքի մէջ կան բաւական տեղեկութիւններ Թիֆլիսում թատրոն հիմնելու և թատրոնական գործի զարգացման վերաբերմամբ։ Այդ տեղեկութիւնները այնքան հետաքրքիր են, որ մենք կաշխատենք մի այլ անգամ աւելի մանրամասն խօսել այդ գրքի բովանդակութեան մասին։ Գիրքը տպված է Թիֆլիսում, ութածալ դիրքով, բաղկացած է 213 երեսներից, գինը 1 ր. 50 կոպէկ է։ Վաճառելուց գոյացած արդիւնքը պիտի յատկացվի ռուսաց Ս. Նունէի օրիորդական դպրոցին։

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. ‹Դեկտեմբերի 25-ին ներկայանալով մեր թատերագրող Գաբրիէլ Սունդուկեանին, Խարկովի համալսարանի հայ ուսանողների կողմից նրա քսանհինգամեակի առիթով ներկայացրինք գեղեցիկ կազմում զետեղված մի ուղերձ։ Ահա ուղերձի բովանդակութիւնը. ‹Մեծարգոյ Գաբրիէլ Սունդուկեանց. Ամբողջ քառորդ դար է անցել այն նշանաւոր օրից, երբ դուք առաջին անգամ դուրս եկաք գրականական ասպարէզ։ Այն՝ ինչ որ դուք արեցիք այդ ժամանակվայ ընթացքում մեր դրամատիական գրականութեան և մեր բեմի համար՝ մեզ բոլորիս ակներև է և արդէն վաղուց ըստ արժանւոյն գնահատած ինչպէս հասարակութեան, նոյնպէս թէ մեր և թէ օտարազգի մամուլի կողմից։ Ձեր ծառայութիւնները այնքան մեծ են, որ մենք համարձակ կարող ենք ձեզ հայոց ժամանակակից բեմի հոգը ստեղծող անուանել։ Ձեր խոշոր տաղանդը ստիպում է իրաքանչիւրին խոստովանել այդ իրողութիւնը և դուք ամենայն իրաւամբ կարող էք ասել՝ «exegi monumentum.» ‹Պէպոն, Քանդած օջաղը› և ‹Խաթաբալան› կազմում են և ընդ միշտ պիտի կազմեն ձեր վաստակի և մեր՝ ազգային պարծանքի անթառամ պսակը։ Անինայ մտրակելով ձեր կոմեդիաների մէջ մեր կեանքի ստոր և կեղտոտ կողմերը՝ դուք մի և նոյն ժամանակ կարողացաք խոյս տալ չափազանցութիւններից և մնացիք մինչև վերջ կատարեալ ռէալիստ։ Բայց ամենից ուրախալին այն է, որ մեր կեանքի այլանդակ ու վատթարագոյն ախտերը չը ծնեցրին ձեր զղայուն սրտի մէջ ատելը և յուսահատ պեսիմիզմ և դուք կարողացաք ձեր աշխատութիւնների մի քանի տիպարների միջոցով մեզ ելք ցոյց տալ այն անթափանցելի խաւարից, որ շրջապատում է մեզ։ Եւ այդ շատ հասկանալի է. ձեր ծիծաղի յետև թաղված է նոյնպէս աշխարհին անտեսանելի այն արտասուքը, որի մասին խօսել է դեռ Գոգոլ, այն արտասուքը, որ գրողի համար մեծագործութիւն է, իսկ ընթերցողի սրտում սէր և հաւատ զարթեցնող ոյժ դէպի կեանքը և բարին։ Այսօր ամբողջ մտածող հայ հասարակութիւնը և ուսանող երիտասարդութիւնը խորին յարգանքով և սիրով ողջունում է ձեզ այն անզուգական նուէրների համար, որ դուք ընծայել էք հասարակական յառաջադիմութեան գործին, ողջունում է նրա համար, որ դուք այնքան նպաստել էք ազգային ինքնաճանաչութեան զարգացման։ Այնպիսի գրող, ինչպէս դուք էք, արժանի է խորին երախտագիտութեան թէ իր ժողովրդից և թէ բոլոր բարեխոհ մարդկանց կողմից։ Ուրեմն, մեծարգոյ Գաբրիէլ Սունդուկեանց, թող տուէք և մեզ, ուսանողներիս, միւսների հետ միասին ձեր քսանհինգամեայ գրականական գործունէութեան նշանաւոր օրը մատուցել մեր սրտագին շնորհակալութիւնը, արտայայտել ձեզ ի բոլոր սրտէ մեր ամենախորին յարգանքը ու երախտագիտութիւնը, մեր անսահման հրճուանքը ու սէրը դէպի ձեզ ու դէպի ձեր տաղանդը և վերջապէս մեր փափագը ու ջերմ աղօթքը։ Թող Ամենաբարձրեալը երկարացնէ ձեր կեանքը շատ ու շատ տարիներ ի փառս և ի զարգացումն հայրենի գրականութեան և ի յառաջադիմութիւն հայ ժողովրդի։› Ստորագրութիւններ։ Ցօբելեարը սիրով ընդունելով Խարկովի համալսարանի հայ-ուսանողների ուղերձը, յայտնում է նրանց իր խորին և սրտաբուղխ շնորհակալութիւնը։›

—

Մեզ ուղարկված է Շուշում տպագրած մի փոքրիկ դրքոյկ, ‹Պանդուխտի յիշատակարանից› վերնագրով, որ գրել է ումն Աշոտ։ Մատենագրական ժամանակագրութեան կարգը պահպանելու համար յիշատակելով այդ գրքոյկը, աւելորդ չէ ասել և այն, որ նա պարունակում է իսկապէս անձնական խորհրդածութիւններ առօրեայ մի քանի հարցերի վերաբերմամբ, և եթէ այդ խորհրդածութիւնները գրական տեսակէտից մի որոշ ձևի չեն ենթարկված, բայց բովանդակութեան կողմից մեծ մասամբ համակրելի են։ Այդ առիթով չենք կարող չը նկատել հետևեալը. առհասարակ ամեն բան կարելի է տպագրել և հրատարակել, բայց դա մի ապարդիւն սովորութիւն է, որ վերջին ժամանակներս նկատում ենք, ամեն օր ստանալով նորանոր գրքոյկներ, որոնց բովանդակութիւնը շատ շատ կարող է նիւթ լինել կամ մի քահանայի քարոզի համար, կամ մի վարժապետի ճառի համար, և կամ վերջապէս բերանացի խօսակցութիւնների համար՝ այս կամ այն շրջանի և այս կամ այն դասակարգի մէջ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց ծխական դպրոցների մի քանիսներում վարժապետների և վարժուհիների առաջիկները շատ անկանոն են վճարում։ Արդեօք ինչ են չինում այդ դպրոցների հոգաբարձու կոչված անձինք, որոնք ուսուցչական խմբի գլխին տարին տասն երկու ամիս ‹ընկոյզ կոտրելով› անկարող և անընդունակ են հոգալու իրանց յանձնված դպրոցների տնտեսական մասը, այն էլ երբ ամբողջ դպրոցի բիւջեյը հազիւ 1500 կամ 2500 բուբլու է հասնում....

—

Պետերբուրգում, ռուսաց հոգևոր սինոդի մէջ հարց է յարուցվել եկեղեցական-թեմական մոնաստրութեան գործը աւելի կանոնաւորելու համար, և այդ նպատակով մշակվում է մի նոր նախագիծ։

—

‹Նմուշներ› վերնագրով բանաստեղծութիւնների մի ժողովածու, որ այս օրերս լոյս է տեսել Շուշում, հայոց հոգևոր տեսչութեան տպարանում, ուղարկված է մեր խմբագրութեան։ Հեղինակն է պ. Մ. Աբեղեան։ Բանաստեղծութիւնների այդ ժողովածուն, որ կրում է ‹Նմուշներ› համեստ անունը, իր մէջ պարունակում է թէ ինքնուրոյն և թէ ժողովրդական աւանդութիւններից վերցրած և թէ յայտնի օտար գրողներից թարգմանած ոտանաւորներ, որոնց մէջ կան և աջողված՝ զգայմունք և միտք պարունակող գրուածներ։

—

Թիֆլիսաբնակ պ. Կարապետ Սարգսեան Հաջի-Մահմուդեանց ուղարկել է մեզ 10 բուբլի, որպէս զի այդ փողով իր անունից ուղարկենք ‹Մշակի› տարեկան մի համարը Սղնախի հայոց ուսումնարանին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 19 դեկտեմբերի 1888 թ.

Այդ. Ժողովի դեկտեմբեր 16-ի նիստն ապար-

լիստ, և ‹գաղափարին նուիրված› երիտասարդ։ Նա ուսումը աւարտել է։ Եկել է հայրենիք։ Գործել է ուզում։ Նոր գաղափարներ է ուզում տարածել....

Անցնում է մի կարճ միջոց։ Նախկին անհաշտ իդէալիստը փոխվել է. նա իր տեղն է տաքացնում. ուզում է կեանք վայելել։

Ցիշեցրէք նրան իր նախկին իդէալները և նա ձեզ՝ փորձված մարդու եղանակով կը պատասխանէ՝

‹Էհ, եղբայր, այն մի ջահելութիւն էր, անցաւ›....

Վարժապետը և վարժուհին սկզբունքով ծեծ չեն ընդունում, բայց դասատուն ծեծում են։ Հարցրէք պատճառը, կասեն՝ ‹շատ բան կայ, որ սկզբունքով լաւ է, բայց.....›

Ինտելիգենտ հասարակութեան որ անդամը չէ իմանում թէ բարձր քաղաքակրթութեան դէվիզն է՝ ‹մէկը ամենքի համար, ամենքը մէկի համար։› Մեզանից ամեն մէկը նոյն իսկ ճառեր կարող է ասել այդ սկզբունքի համար, բայց կեանքի մէջ ամենքի դեվիզն է՝ ‹աշխատիր քո գլուխդ պահել։› Հարցրէք պատճառը։ ‹Ուրիշ կերպ ապրել չէ կարելի›—կը պատասխանեն...

Ասեցէք, վերջապէս, խնդրում եմ, սկզբունքով ով չէ ընդդէմ հարստահարութեան, խաբեբայութեան, բռնութեան, բայց կեանքի մէջ....

Սակայն օրինակները անվերջանալի են....

—

—Էհ ինչ իդէալ, ինչ սկզբունք, ինչ գաղափար,—ահա թէ ինչ է լսվում ամեն օր, ամեն կողմից։

—Ապրել պէտք է, ապրել. կեանքը վայելչութեան համար է տուած,—բացականչում է հին սերունդը։

—Բաւական է որքան իդէալիստութիւն արեցինք,—պատասխանում է նոր սերունդը, և ներս շպրտվում կեանքի հոսանքի մէջ, երբ զգում է, որ շատ ծանր է կուել կեանքի դէմ, և դիմադրել նրա սովորական հոսանքին....

Եւ ցաւալին ու ծիծաղելին այն է, որ այդպիսի այլանդակ մտքեր յայտնելը այս անիծեալ կեանքում համարվում է փորձուածութիւն, իսկ երբ մէկը բարձրաձայն բողոքում է այդ բարոյական անկման, այդ նեխված և փտած կարգերի դէմ, ամենքը պատասխանում են.

—Դա իդէալիստութիւն է, դա ցնորք է....

—

Սակայն ես չեմ կամենում, որ իմ ընթերցողները ինձ պէսիմիստ համարեն, և կարծեն թէ ես արամադիր եմ կեանքի բոլոր կողմերի վրա վատ աչքով նայելու։ Քաւ լիցի։ Ես միայն մի քանի թոյլ գծեր բերեցի այն բոլորից, ինչ որ ներկայացնում է մեր հասարակութեան այժմեան ողորմելի կեանքը։

Ինքն հասարակութիւնը, պաղ բան է, անկարող է քննադատական աչքով նայել իր սեփական կեանքի վրա, և չէ զգում թէ որքան նա ընկած և աղաւաղված է...

Այդ դեռ բաւական չէ։ Հիասթափված և հնթարկված լինելով մի տեսակ ռէակցիայի՝ և տեսնելով հանգամանքների միայն արտաքին կողմը, նոյն հասարակութիւնը սարսափած ամեն օր կրկնում է հետևեալը. ‹դեռ սրանից աւելի վատ կը լինի ապագան....›

Հասարակութեան այդ երկիւղը առաջ է գալիս անկասկած ներկայի անմխիթար հանգամանքներից. բայց ապագայի վերաբերմամբ նա անհիմն է։ Միթէ կասկածել կարելի է, որ քանի մարդկութիւնը կեանք ունի, նա պիտի առաջադիմէ, և այդ առաջադիմութիւնը դէպի լաւը պիտի տանէ... Իսկ այն ռէակցիան, որը այժմ տիրապետում է ամեն տեղ, և որի վրա ես մատնանիշ արեցի, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մօտիկ անցեալի պատրաստած մի դրութիւն, պատմական մի երևոյթ...

Պատմութեան մէջ այդպիսի ռէակցիայի նշաններ շատ անգամ են եղել. այդպիսի դէպքում ամբողջ մարդկութիւնը նմանում է այն մարդուն, որ մի մեծ փոսից անցնելու համար, յետ յետ է գնում, որպէս զի ոյժերը հաւաքած, աւելի մեծ ոյժով առաջ գայ և անցնի մեծ փոսը....

—

—Ցնորք, կը բացականչեն անկասկած պեսիմիստները, կարդալով այդ տողերը։

Այդ տեսակ պէսիմիստական հայեացքներին, թող ներվի ինձ նկատել, ես համաձայն չեմ։ Կանցնի մի առ ժամանակ, և հանգամանքներն էլ կը փոխվեն. և այն, ինչ որ մեզ թվում է ցնորք, վաղը սովորական իրականութիւն կը լինի, և նոյն իսկ այն սկզբունքները, որոնք այսօր կեանքի հետ չեն հաշտվում, այն գաղափարները և մտքերը, որոնք այսօր միանգամայն անիրագործելի են համարվում, ապագայում կը գործադրվեն և կը դառնան սովորական....

Այդ պիտի լինի, ինչպէս ամեն մի անհատի, այնպէս և ամբողջ հասարակութեան՝ գիտակցական հաւատը...

Նայեցէք անցեալի վրա. միթէ մի քանի դար սրանից առաջ ցնորք և խելագարութիւն չէր համարվում այն, ինչ որ այսօր ձեռք է բերել գիտութիւնը, և որից շատ սովորական կերպով օգտվում է ամբողջ մարդկութիւնը....

Ինչ որ պատահեց անցեալի և ներկայի վերաբերմամբ, նոյնը աւելի շուտով և աւելի հսկայական կերպով կը պատահի ներկայի ու ապագայի վերաբերմամբ։

Պէտք է հաւատալ ապագային, առանց վհատվելու ներկայից,—ահա այն խօսքերը, որից աւելի քաղցր նուէր, նոր տարվայ առիթով չեմ կարող անել իմ ընթերցողներին...

Նոր տարիները նոր կեանք կը բերեն,—ուրեմն շնորհաւոր նոր տարի....

ՄԱԼԱՆ

դիւն եղաւ, և սակայն արդիւնքն ապարդիւն ըլլալուն մէջ կը կայանար. արտաւոյ կարծիք և սակայն ճշմարիտ։ Օրուան կարևոր խնդիրը Վարչութեան ներկայացուցած առաջարկն էր, որու համեմատ այսուհետև դաւառները պիտի ղրկուին իրենց առաջնորդ եպիսկոպոսներն ընտրելու ի բաւունքէն. Սահմանադրութիւնը հիմէն խախտել։ Այդ իրաւունքը Պատրիարքարանը իրեն կուզէ վերապահել։ Արդէն նախորդ թղթակցութեամբ մը հաղորդած էի այս մասին իմ ունեցած տեղեկութիւնս. դեկտեմ. 16-ի նստին տեսանք թէ ինչ որ հաղորդած էի հիմնաւոր էր. բայց գրած էի ձեզ թէ այդ առաջարկը մեծ աղմուկ պիտի յարուցանէ. սկզբնաւորութիւնը տեսանք։ Դեկտեմբեր 16-ին Պատրիարք, Կրօնական Ժողով, Քաղաքական Ժողով, եկեղեցականներ փորձ մը փորձեցին և տեսան թէ իրենց ծրագիրներն Ազգ. Ժողովի մէջ սաստիկ ընդդիմութեան պիտի բաղխին և թէպէտ իրենք դեռ չեն համոզուած, բայց մենք գրեթէ ստոյգ կերպով կրնանք ըսել թէ այդ առաջարկութիւնը պիտի չընդունուի։

Վիճաբանութիւնները ջերմ եղան, բայց առանց կրքի, վասն զի ընդդիմադիր կուսակցութիւնը կը զգար թէ զօրաւոր էր ինք, հետևաբար ինչ հարկ յուզուելու, գրգռուելու, իսկ ազգային իշխանութիւնը որովհետև իշխանութիւն է և մանաւանդ որ Քաղաքական Ժողովի Ատենապետը Սիմոն Պէյ հանդարտաբարոյ և խաղաղասէր անձ է, Պատրիարքը նորեկ և խոհեմ՝ բնական էր որ վիճաբանութիւնները հանդարտ ոգւով տեղի ունենային։

Վարչութիւնը—և գիտէք թէ մենք վարչութիւն ըսելով կը հասկնանք Կրօնական և Քաղաքական Ժողովները միասին—կը ներկայացնէր ծրագիր մը Առաջնորդական ընտրութեան եղանակի բարեփոխման և կառաջարկէր կազմել Ցանձնաժողով մը որպէս զի լսէ Պատրիարքին և իր ժողովականներու համոզումներն ու իր տեղեկագիրը ներկայացնէ Ազգ. Ժողովին։ Սակայն Ժողովականները դիտել տուին թէ՝ նախ և առաջ անհրաժեշտ հարկ է որ Պատրիարք ու Վարչութիւն պատճառաբանեալ ծրագրով մը համոզեն ժողովը թէ արդի դրութիւնը օգտակար չէ. երբ իրենց այս կարծիքը բաւական զօրաւոր կերպով կարենան պաշտպանել, այն ատեն Ժողովը կարող է Ցանձնաժողով մը ընտրել, բայց լոկ վարչութեան առաջարկը բաւական չէ առաջարկին կարևորութիւնն ըմբռնելու համար։

Այն ատեն Սիմոն Պէյ սկսաւ խօսել թէ ինչ նպատակաւ այդպիսի առաջարկ մը կը բերեն։ Վարչութիւնը երկու փաստ առաջ կը բերէ, որ կրնայ երեք ալ ըսուիլ։ Ա. Կըսէ թէ եպիսկոպոսները երբ Առաջնորդ ընտրուին չեն երթար.—և Պատրիարքն յայտարարեց թէ՝ ներկայ ընտրական դրութեան վնասակար ըլլալուն ապացոյցն այն է թէ՝ Պոլիս լեցուած է եպիսկոպոսներով։ Բ. Եպիսկոպոս Առաջնորդներն ապրուստի միջոց չունեն։ Գ. Գաւառական Ժողովներն երբ առաջնորդ կընտրեն ընդհանրապէս երկու մասի բաժնուած են, և երբ մէկ կուսակցութեան ընտրելին կը յաղթանակէ, միւս կուսակցութիւնը նորընտիր Առաջնորդին հակառակորդ կը հանդիսանայ։

Վարչութիւնը համոզուած է որ եթէ ընտրութիւնը Պատրիարքարանէն ըլլայ, այս անտեղութիւնները կը վերցուին։ Ամէն եպիսկոպոս կերթայ այն տեղն ուր որ իրեն հրամայուի։ Վանքերը միանալով թեմերուն հասոյթի աղբիւրները կառաւելուն Առաջնորդներու համար։ Ընտրութիւնները Պոլսէն ըլլալով կը դադրին կուսակցական վէճեր։

Այլ ևս Ժողովին անկ էր այս խնդիրներուն վրայ վիճել և ակներև էր որ շատ նիստեր պիտի պահուին. այս անգամ սկզբնաւորութիւն մը եղաւ դեռ. և պէտք է գիտնալ որ այս կէտերուն վրայ ընդարձակ վիճաբանութիւններ ըլլալէ վերջ, եթէ Ցանձնաժողով ընտրուի, դարձեալ խնդիրն Ազգ. Ժողովին պիտի գայ և դարձեալ վիճաբանութիւնները պիտի սկսին։ Այս անգամուան վիճաբանութիւններու համար կարելի է ըսել որ սկզբնաւորութիւն է։ Նախ Տ. Հմայեակ եպիսկոպոս հարցուց վարչութեան թէ ինչու Խրիմեան Հայրիկ, Ալէքսիճեան Գրիգորիս, Սրուանձտեանց Գարեգին և ուրիշ եպիսկոպոսներ Պոլիս են. միթէ իրենց կամքո՞վն է. իրենք միթէ կուզեն Պոլիս մնալ. և եթէ նոր դրութիւն ըլլայ այս Սրբազանները պիտի ղրկուին իրենց թեմերը։—Հարցումը «քաղաքագիտական» չը համարուեցաւ, վասն զի պատասխան տալը դժուար էր. Վարչութիւնը չէր կրնար ըսել որ եթէ ընտրական դրութիւնը փոխուի, Հայրիկ պիտի երթայ Վասպուրական, Ալէքսիճեան Տարոն, Սրուանձտեանց Տրապիզոն։ Արդ եթէ դրութիւն փոխելով այդ եպիսկոպոսները դարձեալ Պոլիս պիտի մընան, ինչ հարկ ուրեմն դրութիւն փոխել։ Հմայեակ եպիսկոպոսի հարցմանը պատասխանեց Նուբեան էֆէնդի, որ այդ օրը Քաղաքական Ժողովի Ինամակալի պաշտօն ստանձնած էր։ Նուբեան էֆէնդիի պատասխանը աւելի վսեմական էր քան գործնական։

Պատրիարքական-վարչական առաջարկին դէմ գլխաւոր խօսողներուն մէջն էին պարոնայք Պէրպէրեան, Սուրէնեան և Աղաբէգեան Մարկոս։

Խնդրին այս վիճակի մէջ Պատրիարք ու Վարչութիւն կը պնդէին դարձեալ որ Ցանձնաժողովը կազմուի, վերջը կը նայենք կըսէին, բայց ժողովականներն ստուար մեծամասնութեամբ պատրաստուած էին անմիջապէս մերժել այդ առաջարկը, եթէ Ազգային իշխանութիւնը անմիջական որոշում պահանջէր։ Եւ սակայն այդ մերժումն ալ իր վտանգներն ունէր զոր գուշակեցին երեսփոխաններէն ոմանք։ Բացատրենք թէ ինչ էր այդ վտանգը։

Այդ նստին օրինաւորութեանն համար հարկ էր որ եօթանասուն և մէկ երեսփոխաններ ներկայ գտնուէին, ու այն օրը միայն քառասուն և վեց երեսփոխաններ կային։ Այս խնդիրը անշուշտ նոր է ձեզ համար, վասն զի տասն և մէկ տարուան մէջ չեմ կարծեր որ տուիթ ունեցած ըլլամ գրելու այս խնդրոյն վրայ. ուստի բացատրենք։

Սահմանադրութիւնը կը տրամադրէ թէ Ազգային Ժողովի նիստերն օրինաւոր ըլլալու համար պէտք է որ նստին ներկայ գտնուին երեսփոխաններու կէսէն մէկ աւելի, որովհետև երեսփոխաններու թիւն հարիւր քառասուն է, բնականաբար կէսէն մէկ աւելին ալ եօթանասուն և մէկ է. ու այս թիւն ալ, 71 թիւը, բացորոշ կերպով գրուած է Սահմանադրութեան մէջ։ Սակայն փորձառութեամբ տեսնուեցաւ որ շատ դժուար է ի միասին բերել 71 երեսփոխաններ, ուստի ուրիշ միջոցներ գտան դժուարութեան յաղթելու համար առանց Սահմանադրութեան դպչելու. ունեցանք ներքին կանոնագիրը, կամ աւելի ճիշդը Ռուսինեանի կանոնագիրը, որ աւելի քան տասն և չորս տարի հնարաւոր ընծայեց Ազգ. Ժողովին կանոնաւոր կերպով իր գործերը տեսնել։ Այդ կանոնագրին համեմատ Ազգ. Ժողովը երկու տեսակ մեծամասնութիւն կունենար. մէկ մեծամասնութիւնը 46, միւսը՝ 71. շարք մը խնդիրներու համար առաջին մեծամասնութիւնը պէտք էր փնտռել, շարք մը խնդիրներու համար երկրորդը։ Իսկ երբ այդ թիւերը չը գոյանային Ժողովը կարող էր առաջին կարգի խնդիրներու համար 24 ձայնի միաբանութեամբ, և երկրորդ կարգի խնդիրներու համար 36 ձայնի միաբանութեամբ որոշում տալ։ Ինչու՞ համար 36 ձայն։ Վասն զի եթէ 71 երեսփոխանք ներկայ գտնուին անոնց մեծամասնութիւնը, կէսէն մէկ աւելի 36 է, արդ երբ 36 ձայն միաբանին, ուրեմն օրէնքին հոգին անհարուած կը մնայ. այս տեսութեամբ պատրաստուած էր ներքին կանոնագիրն, որուն չնորհիւ տասն և չորս տարուան մէջ հազիւ երկու կամ երեք անգամ, գէշ օդի պատճառաւ այն ալ, Ժողովը ապարդիւն նիստ ունեցաւ։ Բայց գիտէք թէ այս տարի պատրիարքական ընտրութեան առթիւ արդի Քաղաքական Ժողովն ուզեց որ ներքին կանոնագիրը ջնջուի, վասն զի այդ ներքին կանոնագրով դժուար պիտի ըլլար ի գործ դնել Քաղաքական Ժողովի մի քանի փափագները, և միանգամայն այդ ներքին կանոնագիրը վիրաւորիչ էր էֆէնդիներէ ոմանց, հետևաբար ձեռքի տակէ միջոցներու դիմեցին, որ դատական գործոց նախարարի ձեռքով դադրեցնեն այդ ներքին կանոնագիրը, ինչպէս իր ատենին բացատրած եմ երկարօրէն։ Ցաջողեցան. այն ժամանակ Պատրիարք չունէինք և ժողովականները հարկ համարեցին համբերել. բայց այժմ ահա տեսնուեցաւ թէ ինչ մեծ սխալ գործած է Քաղաքական Ժողովը։ Տեղը չէ ըսել. «գուբն զոր փորեաց և պեղեաց ի նոյն անկցի ի խորխորատ»։ Դեկտեմբերի 16-ին Քաղաքական Ժողովն էր, որ ներքին կանոնագրի պէտքը կը զգար։

Խօսքս հետևեալ անգամ պիտի շարունակեմ։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նոր տարվայ առիթով եւրոպական լրագիրները, ի հարկէ, ոգեորված եղանակով և ոգեորված յոդուածներով՝ մեծ յոյս են յայտնում, որ եւրոպական խաղաղութիւնը չի խանգարվի և 1889 թիւը պատերազմական աղէտների պատճառ չի դառնայ։

—Լօնդօնից եկած վերջին տեղեկութիւնները հերքում են նախորդ լուրերը Միացեալ-Նահանգների նախկին նախագահ Կլեվելենդի կեանքի դէմ եղած փորձերի մասին։ Բանից երևում է, որ այդ փոքձը եղել է ոչ թէ Կլեվելենդի, այլ այժմեան նախագահ Հարիսոնի դէմ։

—Վիէննայում լուր է ստացված Բէլգրադից, որ իբր թէ սերբիական մինիստրութիւնը վճռել է արդէն խմբովին հրաժարական տալ։

—Այս բոլէիս ահագին աղմուկ է տիրապետում թէ Լօնդօնում և թէ Բերլինում. դրա պատճառը այն է, որ այս օրերս «Times» լրագրի մէջ լոյս է տեսել այն գրագրութիւնը, որ տեղի է ունեցել Պետերբուրգի անգլիական դեսպան Ռոբերտ Մորիերի և կոմս Հերբերտ Բիսմարկի մէջ՝ 1870 թվի պատերազմական գործերի և մարշալ Բազէնի վերաբերութեամբ։ Այդ գրագրութիւնը հրատարակել է Մորիեր,—և նրա բարձրացրած աղմուկը դժուար թէ շուտ վերջանայ։

—Փարիզում յունվարի 27-ի ընտրութիւնների առիթով զանազան կուսակցութիւնների մէջ բաւական իրարանցում է տիրապետում։ Միապետականները մտադիր են եղել, իբրև իրանց կանդիդատ, առաջարկել Օմալեան դքսին, բայց յետ են կանգնել այդ մտքից։ Կանդիդատների թւում յիշվում են թէ Ֆլոկէ և թէ Բուլանժէ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—Վերջապէս... անցաւ այս թարս նահանջ տարին,—ասում են ամենքը, չնորհաւորելով միմեանց նոր տարին... Բայց ինչ կը լինի այս նոր տարին.—գուշակել, ի հարկէ չէ կարելի, միայն մարգարէացող հայոց Էֆիմերդին հետևեալ մաղալու գուշակութիւններն է անում... «Առաջիկայ 1889 թվին ցորենի պարարտութիւն կը լինի. ձմեռվայ սկիզբը բարեխառն, վերջը ցուրտ և քամի, գարունը անձրևային. ամառը բարեխառնը, հով, և զով. աշնանը քամիներ կը փչեն... Մեծամեծ անասուններ և շատ շներ կը սատակեն։ Երեխաների տկարութիւն։ Այս տարի շատ արիւնհեղութիւն կը լինի և զանազան վնասակարութիւն. կը լինեն պատերազմներ, վէճեր խռովութիւններ....»

*
* *

Մարշալ Մակ-Մահոն վճռել է հրատարակել իր յիշատակարանները, որոնք շատ հետաքրքրական տեղեկութիւններ են պարունակում Ղրիմի, իտալական և ֆրանս-գերմանական պատերազմների մասին։

*
* *

Փետրվարի 23-ին Զինաստանում մի արտասովոր իրողութիւն պիտի կատարվի. այդ օրը չինաց կայսրը պիտի ամուսնանայ։ Նոր կայսրուհու անունն է Իէ-Հօ-Նալա, որ կը նշանակի «զեղեցիկ և բարի»։

*
* *

Զարմանալի մարդիկ են ամերիկացիք. մեզ մօտ, Թիֆլիսում ինքնասպանութեան մի քանի դէպքեր եղան,—և ահա ամենքը մտածում են, թէ ինչ անեն, որպէս զի ինքնասպանութեան դէպքերը չը կրկնվեն, իսկ Միացեալ-Նահանգներում գրքեր են հրատարակում այն մասին, թէ ինչպէս, ինչ միջոցներով և ինչ եղանակով կարելի է աւելի հեշտութեամբ ինքնասպանութիւն գործել։ Նորերս Ֆիլադելֆիայում էլ մի այդպիսի նպատակ ունեցող գիրք լոյս տեսաւ հետևեալ վերնագրով՝ «Գիրք ինքնասպանների համար»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՍՕՖԻԱ, 28 դեկտեմբերի։ Այստեղի ուղղափառ սինոդի և բուլգարական կառավարիչների մէջ ընդհարում տեղի ունեցաւ։ Դաւանութիւնների մինիստր Ստոյանովի պահանջեց, որ սինոդի նախագահը, Սիմէօն եպիսկոպոսը, այցելէ Կօբուրգեան պրինցին։ Սիմէօնը հրաժարվեց այդ պահանջը կատարելուց, բացատրելով, որ պրինցը ուղղափառ եկեղեցու թշնամի է։ Այն ժամանակ բուլգարական կառավարիչները հրամայեցին սինոդին հեռանալ. բայց սինոդը չը կամեցաւ ենթարկվել այդ կարգադրութեանը։ Սպասում են նորանոր ընդհարումների։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 դեկտեմբերի։ Այսօր ձայնաւորների բօրսային ժողովում միաձայն որոշված է՝ բօրսային ժամերը փոփոխել. սրանից յետոյ պէտք է ժողովը բանալ $10^1/_2$-ից մինչև $12^1/_2$ ժամը։ Այդ փոխոխութիւն մացնելու մասին կը յայտարարվի յունվարի 2-ին։

ԲՕՄԲԷՅ, 29 դեկտեմբերի։ Զօրահանդիսի ժամանակ, որ կատարում էր աֆղանական էմիրը Մազարիշէրիֆում, մի զինուոր հրացան արձակեց էմիրի վրա։ Էմիրը անվնաս մնաց։ Զինուորին տեղն ու տեղը սպանեցին։ Էմիրը երևի ձմեռը կանցկացնէ աֆղանական Թուրքեստանում։

ՓԱՐԻԶ, 30 դեկտեմբերի։ Բուլանժէի, որպէս Փարիզի պատգամաւորի, ընտրութիւնը, հանրապետական բանակում եղած տարաձայնութիւնների պատճառով, հաւանական է։

ՅԷՏԻՆԻԷ, 30 դեկտեմբերի։ Միլիցիա և Անաստասիա իշխանուհիները երէկ ճանապարհ ընկան դէպի Պետերբուրգ, Պետրովիչ մինիստրի ուղեկցութեամբ։

ԼՕՆԴՕՆ, 30 դեկտեմբերի։ Բանկը իջեցրեց դիսկօնտը 5-ից մինչև 4%-ը։

ԼՕՆԴՕՆ, 30 դեկտեմբերի։ Նիանզիի հարաւային ափից հեռագրում են. «Ուգանդ-Մվանգա թագաւորը կամենում էր սովամահ անել արաբ-թիկնապահներին. նրանք յարձակվեցան պալատի վրա և գահը բարձրացրին Մվանգայի եղբօրը՝ Կիովային։ Երբ Կիովա սկսեց պաշտօններ բաժանել քրիստոնեաներին, արաբները կոտորեցին պաշտօնական անձանց, փոխարինեցին նրանց մահմեդականներով, յարձակվեցան և այրեցին անգլիական և ֆրանսիական գաղթականութիւնները։ Քաջալերված իրանց աջողութեամբ, արաբները սպառնում են ոչնչացնել միսիոնարութեան պտուղները Միջին Աֆրիկայում և վրէժխնդիր լինել անգլիացիներից ստրուկների առևտուրը ճնշելու համար։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Դեկտեմբերի 30-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	94 ր.	25	›
Համբուրգի վրա 100 մարկ — . .	46 ›	15	›
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 ›	05	›
Ոսկի — արժէ — . .	7 ›	58	›
Մաքսային կուպոններ — . .	150 ›	75	›
Արծաթ — — — . . .	1 ›	14	›
Բօրսային դիսկօնտներ — . . .	— ›	—	›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	98 ›	75	›
— — — — 2-րդ —	97 ›	75	›
— — — — 3-րդ —	97 ›	62	›
— — — — 4-րդ —	97 ›	62	›
— — — — 5-րդ —	97 ›	62	›
Ոսկեայ փոխառութիւն.	140 ›	25	›
Նոր 4% փոխառութիւն.	81 ›	75	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	97 ›	50	›
— — 2-րդ —	97 ›	62	›
— — 3-րդ —	97 ›	25	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	272 ›	50	›
— երկրորդ —	245 ›	75	›
$5^1/_2$% բէնտա	102 ›	—	›
Ոսկեայ բէնտա.	172 ›	—	›
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն.	148 ›	50	›
Նոր երկաթուղային բէնտա . . .	98 ›	25	›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	150 ›	—	›
— — թղթադ. .	90 ›	75	›
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	98 ›	—	›
$5^1/_2$% գրաւական թղթեր Խերսօնի կալուած բանկի.	97 ›	—	›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	100 ›	—	›
— — Պոլտավայի— —	100 ›	—	›
— —Պետ.Տուլսկ.— —	100 ›	—	›
— — Կիևվի — —	101 ›	—	›
— — Մոսկվայի — —	101 ›	25	›
— — Բեսարաբ. Տավր.—	99 ›	75	›
— — Նիժ. Սամար. —	100 ›	—	›
— — Վիլնայի —	99 ›	—	›
— — Թիֆլիսի—72 և — տ.	97 ›	—	›
— —Բուխարայիսի-18 և — տ.	97 ›	—	›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	695 ›	—	›
Ռուսաց երկաթուղիների ընդհան. ընկ.	240 ›	—	›
Ռիբինսկ-Բոլոգովի ընկ.	86 ›	—	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	92 ›	—	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	91 ›	62	›
Օդէսայի — — .	93 ›	—	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	82 ›	—	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Յ. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Յունվարի երեքից սկսած ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադէտական կորպուսի և այլ ուսումնարանների համար: Կէս տարվայ ուսման վարձն է 40 բուբլի. Պանսիօնում չափաւոր գնով պահվում են դիշերօթիկներ: Հասցէն. Тифлисъ, Большая-Ванкская улица, № 3. 1—3

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆ
"ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԱՅԻ,"
Գ. ՏԱՐԻ 1889

Բաժանորդագրութեան գինն է՝ ճամբու ծախքով՝ տարեկան 8 ֆր. — 4 ռբ. — 4 ֆի... Խմբագրութեան հասցէն է՝ Rédaction de la Revue «Hantess», Vienne (Autriche), VII. Mechitharistengasse 4, և կամ՝ Вѣ Вѣну (Австрія), редакція «Андесъ», Wien, VII. Mechitharistengasse 4.

Խմբագրութիւնս որոշած է Հանդիսի Գ. Տարւոյն շրջանէն տասն օրինակ նուիրել ազգային կարօտ վարժարանաց՝ վիճակահանութեամբ: Այն վարժարանք՝ որ կը բաղձան մասնակցիլ վիճակահանութեան, պէտք են՝ վարժարանին վարչութեան կնքովն վաւերացեալ խնդրագիր մատուցանել խմբագրութեանս: Խնդրագիրք փութով հասնելու են խմբագրութեան ձեռքն: 1889 տարւոյ Հանդիսի Յունուար 1 թիւն ուղղակի խմբագրութենես կրնայ ընդունուիլ ՁՐԻ ուղարկելով 5 սանդ. — 10 փրդ. — 2 կոպ. նամակագրոշմ:

1—3 Խմբագրութիւն «Հանդիսի»

Բացված է բաժանորդագրութիւն „ԲԱԶՄԱՎԷՊ" Հանդիսարանի
47-որդ տարի 1889 Վենետիկ Ս. Ղազար

առաջիկայ 1889 տարւոյն «Բազմավէպ» հանդիսարան ուսումնաթերթն փոխանակ եռամսեայ լինելու, ամեն ամսոյ սկիզբը երկերկու ութծաղ թերթիւք ի լոյս պիտի ընծայուի: Տարեկան գինն է 10 ֆրանք. Ռուսաստանի համար 4 բուբլի ճանապարհի ծախքով. բաժանորդ գրուել ցանկացողք կարող են դիմել ուղղակի խմբագրութեան. Venise, au couvent P. P. Mékhitaristes, S. Lazare. կամ առ գործակալ մեր որ ի Տփխիս պ. Յովակիմ Զաթալպաշեան:

1—5 Խմբագրութիւն «Բազմավէպ» հանդիսարանի

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 6/18 յունվարի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ ERYMANTH (ԷՐԻՄԱՆԹ) նաւապետ AUGE (ՕԺԷ), մտնելով Կ. Պոլիս, Պօրտ-Լահօր և Լակավալ:

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ: 1—2

ՄԻ ՀԱՄԵՍՏ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ ընդունում է դիշերօթիկ և կիսադիշերօթիկ 8-ից մինչև 13 տարեկան ԵՐԵԽԱՆԵՐ:
Հարցնել Վանքի փոքր փողոց № 5.

2—10 (և. շ.)

ԸՆ ԺԻՐԱՐԴՈՎՍԿՈՄԸ ՍԿԼԱԴԷ

Тифлисъ, Дворцовая ул., КАРАВАНСАРАЙ БЫВШІЙ АРЦРУНИ.

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍՏ
Դվորցովայա փողոց ՆԱԽԿԻՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ քարավանսարայում
Ստացված են
ՊԱՏՐԱՍՏ ԲՐԵԶԻՆՏՆԵՐ ամեն տեսակ չափերի

3—10 (2) ԴՈՆՆԷՐ և ԼԷՑՏ

ОПТИЧЕСКОЕ ОТДѢЛЕНІЕ
въ магазинѣ часовъ
М. Г. ЦЕЙТЛИНА
противъ Дворцоваго сада, угловой магазинъ.
ВСЕВОЗМОЖНЫЕ ОЧКИ, ПЕНСНЭ, ЛОРНЕТЫ и ТЕРМОМЕТРЫ.
отпускаются въ точности по рецептамъ г.г. врачей, по новой метрической и прежней дюймовой системѣ. Починки и вставки стеколъ.
ЦѢНЫ САМЫЯ УМѢРЕННЫЯ. 4—6 (2)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, յունվարի 5-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմշօղլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նովկին Աբծրունի դալլերէում, № 103. 3—3 (շ. և. կ.)

«ԱՐԱՔՍ» ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑՎԱԾ Է: ՄԻՆՉԵՒ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ը, «Արաքսի» երկու գրքերի գինն է 3 բուբլի. իսկ այնուհետև ստորագրվողների համար՝ 5 բուբլի:

«Արաքսի» առաջին գիրքը կը հրատարակվի փետրվարի վերջին: Նրա մէջ կը մտնեն ի միջի այլոց հասարակական խնդիրներ, տեղագրութիւններ, մասնաւորապէս Կիլիկիոյ վերա (Մարաշ, Զէյթուն, Հաջին հանդերձ տեղական աւանդութիւններով). Մատենագրական. Նորավէպ Պոլսի կեանքից, Նորավէպ Յուրգէնեվից, բանաստեղծութիւններ: Կենսագրութիւններ. Պոլսի ս. պատրիարքի, Փրնուզի Նիկողոս եպիսկոպոսի (Զէյթունի հերոսի), Կարապետ վարդապետ Շահնազարեանցի, Բերովբէ Պատկանեանցի, Գ. Սունդուկեանցի, վառօդապետ Տատեանի, երկայնաբազուկի: Մատենախօսութիւն (ընդարձակ): Գիտական գրուածքներ, տաճկահայերի ընդհանուր գործերի տեսութիւնը, հասարակական և գրականական, և այլն: Եւ սրանց հետ դրված կը լինեն գեղեցիկ պատկերներ և տեսարաններ:

Անցեալ տարվայ գրքերի գինն է այժմ 8 բուբլի: Մեզ դիմելու են այսպէս:
Петербургъ. Симеону Гуламирянцу.

2—2 Սիմէօն Գուլամիրեանց

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
„ԵՐԱԽԱՅՐԻՔ"

Հրատարակութեան վերջին չորրորդ գիրքը—Զմեռը: Գինը 50 կոպէկ է: Վաճառվում է Թիֆլիսի Կենարօնական, Կովկասեան և միւս բոլոր գրավաճառանոցներում: Ցանկացողները նոյն տեղերում և և հեղինակից կարող են ստանալ «ԵՐԱԽԱՅՐԻՔԻ» առաջին, երկրորդ, երրորդ (Գարուն, Ամառ, Աշուն) գրքերը, որոնց իւրաքանչիւրի գինը նոյնպէս 50 կոպէկ է: Իմ հասցէն. Шулаверъ (черезъ Бѣлый-Ключъ) Аршаку Меграбянъ.

2—3 Արշակ Մէհրաբեան

Լոյս տեսաւ և վաճառվում է յայտնի գրավաճառանոցներում
ԱՇԸՂ ՂԱՐԻԲԻ ՀԷՔԻԱԹԸ
երկրորդ տպագրութիւն
նոր երգերի յաւելուածով
աշխ. Աշըղ Ջիւանի.
Գինն է 45 կոպ. գումարով գնողներին զիջումն կը լինի:

2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԱԲԻՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 բուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:
Միանուագ քսանից աւելի գնողին զիջումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԷՍ Խիդիկէլի և ընկ. գրավաճառանոցում, Թիֆլիս, Գօլովինսկի Պրոսպէկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ: 26—40

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ"
ВЪ 1889 ГОДУ
(ШЕСТОЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по нынѣшней программѣ газеты литературной, общественной и политической.

Условія подписки, съ пересылкою и тоставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р. 50 к., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

Объявленія: на 4-й страницѣ газеты по расчету 8 к. за строку петита или за занимаемое ею мѣсто. На первой страницѣ—15 к. за такую-же строку.

Подписка и объявленія принимаются: ВЪ ТИФЛИСѢ—въ конторѣ изданія, Головинскій просп., домъ Читахова. № 12.

а) ВЪ ОТДѢЛЕНІЯХЪ КОНТОРЫ:

б) ВЪ БАКУ—при аптекарскомъ магазинѣ И. Г. Чубинова, на Михайловской улицѣ домъ Мирза-Авакова и Карабегова.

2) ВЪ КУТАИСѢ—при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе, противъ бульвара, въ домѣ Г. Андроникова.

3) ВЪ БАТУМѢ—при конторѣ М. С. Бетанова, Набережная, домъ Ферадъ-Бега.

в) У АГЕНТОВЪ КОНТОРЫ:

1) ВЪ Г. ШУШѢ—С. О. Ананьева, на площади Топханэ.

2) ВЪ Г. ГОРИ—Ир. И. Рамишвили.

Въ отдѣленіяхъ и у агентовъ подписка и объявленія принимаются по редакціоннымъ цѣнамъ, безъ всякой надбавки. Розничная продажа тоже производится безъ увеличенія платы, по 5 коп. за номеръ.

Иногородніе адресуютъ свои требованія: Въ Тифлисъ, въ редакцію «Новаго Обозрѣнія».
Издательница О. А. Николадзе. Редакторъ М. А. Успенскій.

„ДОНСКАЯ ПЧЕЛА"
годъ (XIV)

Какъ и въ теченіи минувшихъ двѣнадцати лѣтъ, будетъ выходить два раза въ недѣлю, по четвергамъ и воскресеньямъ.

Подписная цѣна:

Безъ доставки въ Ростовѣ на-Дону.		Съ пересылкою иногороднимъ.	
на годъ	6 р. —	на годъ	7 р.
„ полгода	3 „ 50	„ полгода	4 „ —
„ 3 мѣсяца	2 „ —	„ 3 мѣсяца	2 „ 50

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Письма и деньги адресуются исключительно въ контору редакціи „Донской Пчелы", въ Ростовъ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ Гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

ПРЕМІЯ. Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 25-го Декабря сего 1888 года подписныя деньги за 1889 годъ, будетъ разосланъ БЕЗПЛАТНО Донско-Азовскій русско-армянскій календарь на 1889 годъ, въ которомъ, кромѣ общекалендарныхъ многочисленныхъ свѣдѣній, помѣщены также: Новочеркаскъ и Войско Донское (историческій и географическій очеркъ) и полный Адресъ-календарь городовъ: Ростова, Нахичевана, Таганрога, Новочеркаска, Азова и проч.

Редакторъ-Издатель И. А. Тер-Абраміанъ.

2—3

ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ВѢНСКІЙ МАГАЗИНЪ

ԵՂԲ. Վ. և Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Մղիվանիի տանը, առաջին կլասիկական գիմնազիայի դիմաց

ԴԷՊՕ

Մարդկանց և երեխայոց պատրաստի հագուստների:

Ստացել ենք մօտ օրերս զանազան յայտնի և նշանաւոր գործարաններից մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ամենավերջին ձևի: Գները՝ ամենամատչելի և ձեռնտու են:

II ՊԱՀԵՍՏԸ գտնվում է եղբ. Աբովեանների տանը № 1, 2, 3 և 4, Ալէքսանդրեան այգու դիմաց:

ԵՂԲ. Վ. և Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐ

Ներկայ 1889 Թուականի յունվար ամսից սկսուելու է հրատարակուել

„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐԸ ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ.—

1. Յօդուածներ գրական, տնտեսական, իրաւական, պատմական և հոգևոր բովանդակութեամբ: 2. Բանաստեղծական վէպեր, պատմութիւններ, դրամաներ, ոտանաւորներ, երգիծաբանութիւններ: 3. Յօդուածներ կովկասեան կեանքի հասարակական խնդիրներից: 4. Թղթակցութիւններ ռուսաց տէրութեան և արտասահմանի զանազան տեղերից: 5. Յօդուածներ գիտութեան զանազան ճիւղերից: 6: Գրախօսութիւն և քննադատութիւն: 7) Հաշիւներ այլ և այլ ընկերութիւնների նիստերի. 8. Թատրոն, երաժշտութիւն, գեղարուեստ: 9. Տեսութիւն ներքին և արտաքին քաղաքական անցքերի: 10. Ներքին և արտաքին քրոնիկոն և զանազան լուրեր: 11. Յայտարարութիւններ:

«ՄՈՒՐՃ»-ի ծաւալը: «ՄՈՒՐՃ» ամսագիրը լինելու է մեծադիր, քառածալ: Իւրաքանչիւր համարը ունենալու է 8-ից մինչև 10 տպագրական թերթ, որ նոյնն է թէ 128-ից մինչև 160 երես: Բոլոր 12 համարները կը կազմեն երկու հատոր շուրջ 1,800 երեսով:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագինը՝ տարեկան 10 րուբլի, կէս տարուան՝ 6 րուբլի կանխիկ վճարելի: Փոստի ծախքերը կրում է խմբագրութիւնը: Ուսուցիչների, վարժուհիների և ուսանողների համար վճարի վերաբերութեամբ զիջում և յետաձգում կը լինի:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագրութիւնը արդէն սկսված է: Խմբագրութիւնը բաց է ամեն օր, առաւ. ժամ 9—1: Խմբագրութիւնը գտնվում է՝ Тифлисъ, Гановская ул, домъ Іоаннисіани, բոլորովին մօտ Երևանեան հրապարակին: Ուրիշ տեղերից դիմում են ուղղակի՝ Тифлисъ, въ Редакцію журнала «МУРТЧЪ»:

2—3

Խմբագիր-Հրատարակիչ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

1889 Թուին

(ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՐՁԱԳԱՆՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՄԻ ԵՒ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ.

Տարեկան բաժանորդագինն է 5 րուբլի: Կէս տարվանը 3 րուբլի:

Թիֆլիսում ստորագրութիւնն ընդունվում է «Խչ. Բէհբութեանի և Աբ. Յովհաննիսեանի լրագրական գործակալութեան» գրասենեակում և Թիֆլիսի «Փոխադարձ վարկի ընկերութեան» մէջ, խմբագրի մօտ: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, въ редакцію «Арцаганкъ», արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»: Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼՈՒ Է

„ՆԵՂՈՍ“

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Լրագրոյս տարեկան բաժանորդագինն է ամեն տեղի համար 10 Ֆրանք,—վեցամսեայն 5 ֆրանք. միշտ կանխիկ վճարելի:

—Փոստային ծախսը խմբագրութեանս կը վերաբերի:

—Լրագրոյս վերաբերեալ ամեն կարգի գրութիւնք պէտք է յղել հետևեալ հասցէիւ. «Առ խմբագրութիւն «ՆԵՂՈՍ» լրագրոյ» յԱլեքսանդրիա (Եգիպտոս). (փոստ Եգիպտական): A la Rédaction du Journal Arménien «NÉGHOS», Alexandrie (Egypte). (Poste Egyptienne).

3—3

ԽՄԲԱԳԻՐ—ՏԷՐ ԱՆՏՕՆ ՌՇՏՈՒՆԻ

1889 ԹԻՒՆ Կ. ՊՕԼՍՈՒՄ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ

„ԱՐԵՒԵԼՔ“

Քաղաքական և ազգային լրագիրը: Տարեկան բաժանորդագինն է օտար երկիրների համար 56 Ֆր. վեց ամսեայ 28 ֆրանկ:

Հասցէն. Direction du journal «AREVELK» Noradounghian Han, Galata Constantinople.

DEUXIÈME ANNÉE — DEUXIÈME ANNÉE

REVUE

COMMERCIALE ET INDUSTRIELLE DU CAUCASE

RÉDIGÉE EN LANGUE FRANÇAISE ET RUSSE

ET PARAISSANT A TIFLIS LE 1er ET LE 15 DE CHAQUE MOIS

Directeur : J. MOURIER

PRIX DE L'ABONNEMENT : Six Mois, 7 fr. 50 (3 roubles); Un An, 15 fr. (6 r.)

ԿՕՇԿԱԿԱՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

ԱՂԱՍԻ ՏԷՐ-ԶԱՔԱՐԵԱՆԻ

Գօլօվինսկի, տուն Բէյտերի, № 11.

Ընդունում է կանանց և տղամարդոց ամեն տեսակ կօշիկների պատուէրներ, ԶԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ. պատրաստվում են շուտով: Պատուէրները ընդունվում են խանութում. պատրաստելուց յետոյ կարելի է ստանալ միայն խանութում. տուն չէ ուղարկվում:

6—10

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1889 ГОДЪ НА ЖУРНАЛЪ

„МЕДИЦИНСКАЯ БЕСѢДА“

ПОДЪ РЕДАКЦІЕЮ А. Х. САБИНИНА.

ГОДЪ III

«Медицинская Бесѣда» имѣетъ цѣлью знакомить общество, черезъ посредство общедоступныхъ статей, съ современнымъ направленіемъ врачебной науки и съ желательною постановкою врачебнаго дѣла. Земскіе санитарно-медицинскіе вопросы, статьи по общественной и частной гигіенѣ, статьи по различнымъ отраслямъ врачебной науки, школьная гигіена, аптечное дѣло, статьи по различнымъ отраслямъ естествознанія, врачебныя замѣтки и хроника, библіографическій отдѣлъ, историческія свѣдѣнія и замѣтки—вотъ основная часть программы журнала. «Медицинская Бесѣда», имѣя обширную, разностороннюю программу, будетъ служить, какъ и въ прошлыхъ годахъ, въ одинаковой степени интересамъ врачей и публики.

«Медицинская Бесѣда» выходитъ два раза въ мѣсяцъ, каждый рызъ въ объемѣ до 2-хъ печатныхъ листовъ.

Цѣна за годъ безъ доставки 3 р. 50 коп., съ доставкой 4 руб.; за полгода безъ доставки —2 руб., съ доставкой 2 р. 50 к.; съ пересылкой за годъ—4 р. 50 к.. за полгода—3 руб. Фельдшера, фельдшерицы, акушерки и сельскіе учителя платятъ 3 руб, въ годъ съ доставкой и пересылкой.

Подписка принимается: въ Воронежѣ, въ конторѣ журнала (1-я Острогожская, д. Мюфке) и въ книжномъ магазинѣ В. В. Юркевича (Больш. Двор. ул., домъ Адлеръ), въ С.-Петербургѣ: въ книжномъ магазинѣ К. Л. Риккера (Невскій, № 14), въ Медико-Хирургическомъ магазинѣ Н. П. Петрова (Выборгская сторона, Нижегор., № 17); въ Москвѣ: въ книжномъ магазинѣ А. А. Карцева (Фуркасовскій переул., д. Обидиной) и въ конторѣ Н. Печковской (Петровскія линіи); въ Орлѣ, въ публичной библіотекѣ «Орловскаго Вѣстника»; въ Самарѣ, въ конторѣ редакціи «Самарской газеты»; въ Астрахани, въ Прибалтійскомъ магазинѣ, г. Рослякова, въ Оренбургѣ, у г. завѣдующаго библіотекой при Казенной Палатѣ. 4—6

Открыта подписка на газету

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

на 1889 годъ.

Газета неизмѣняя своего направленія, и въ будущемъ году будетъ издаваться ежедневно, исключая послѣпраздничныхъ дней. Постепенно возростающій успѣхъ «Тифлисскаго Листка» побудилъ насъ значительно увеличить програмку газеты. Съ будущаго года, помимо существовавшихъ отдѣловъ, мы будемъ помѣщать всѣ правительственныя распоряженія, равно приказы о производствѣ въ чины и награжденія орденами по военному и гражданскому вѣдомствамъ. Отчеты думскихъ засѣданій и рефераты мѣстныхъ ученыхъ обществъ мы будемъ составлять болѣе подробно чѣмъ въ истекающемъ году. Главнымъ образомъ, мы направимъ всѣ свои усилія къ развитію «Мѣстнаго отдѣла», давая въ немъ возможно полныя свѣдѣнія о мѣстной жизни, о мѣстныхъ злобахъ дня и вообще о выдающихся событіяхъ и проявленіяхъ общественной житни. Обращено будетъ нами также вниманіе и на отдѣлъ беллетристическій.

Увеличеніе программы газеты, сопряженное съ нѣкоторыми затратами, вынуждаетъ насъ набавить на подписную цѣну одинъ рубль, такимъ образомъ, вмѣсто трехъ рублей, городскіе подписчики будутъ платить четыре руб., для иногороднихъ-же подписчиковъ цѣна остается прежняя.

ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ доставкой въ Тифлисѣ.
На годъ . . . . 4 р. — к.
» полгооа . . 2 » 50 »
» 1 мѣсяцъ . —» 50 »

Съ пересылкой для иногороднихъ
На годъ . . . . 5 р.
» полгода. . . . . . 3 »
» 1 мѣсяцъ . . . . . 1 »

Подписка и объявленія принимаются исключительно въ конторѣ редакціи „Тифлисскаго Листка“, на Барятинской улицѣ, д. Ротинова.

Подписка принимается только на вышеуказанные сроки съ 1-го числа любаго мѣсяца.

2—3

ГАЗЕТА А. ГАТЦУКА

(ИЗДАЮЩАЯСЯ СЪ 1875 ГОДА)

Единственная въ Россіи политико-литературная иллюстрированная газета, послѣ пріостановки ея изданія, по распоряженію г. министра Внутр. Д., на 8 мѣсяцевъ, выходитъ съ 1 октября 1888 г. въ объемѣ 2-хъ—3-хъ листовъ въ недѣлю.—Въ видѣ безплатныхъ приложеній къ «Газетѣ» годовые подписчики получаютъ: 1) парижскія моды съ рисунками и лучшими парижскими выкройками; 2) переводные романы и повѣсти 6 книгъ въ годъ.

Преміи годовымъ подписчикамъ: Крестный календарь на 1889 годъ и 6-й выпускъ иллюстрированныхъ драмъ Шекспира: «Сонъ въ лѣтнюю ночь», перев. С Юрьева.

Условія подписки на 1889 г.: безъ дост. на годъ 4 р., съ дост. и перес. 5 р. на полгода (съ 1 января и Іюля) 3 руб., на 1/4 года—1 руб. 60 к. 1 мѣсяцъ 60 к. Заграницу—на годъ 7 руб., на полгода 3 руб. 50 коп. Разсрочка годовой платы допускается для казенныхъ учрежденій, училищъ и волостей по четвертямъ года именно: при подпискѣ взносится 2 р., въ слѣдующія четверти по 1 р. Учителя же всѣхъ училищъ, при взносѣ единовременно за годъ, или при полугодовой разсрочкѣ, платятъ, вмѣсто 5 р., 4 р. 50 к. (по полугодьямъ—по 2 р. 25 к.).

Подписная цѣна на 3 мѣсяца 1888 г.—съ 1-го октября по январь 1889 г.—1 руб. 60 к.

Подписка принимается: въ Москвѣ въ Главной конторѣ редакціи и въ лучшихъ магазинахъ.

За прежніе года, съ 1875 года, газету можно получать по 3 р. за томъ (годъ), безъ пересылки, кромѣ 1880 г. не имѣющагося уже въ продажѣ. Адресъ: Москва, Никитскій бульв., д. Гатцука. Редакторъ А. Гатцукъ.

1—2

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԿԸ

„THE NEW ORIENTAL BANK CORPORATION LIMITED“, որը աշխարհիս ամեն մասերում ունի բաժիններ, այժմ բաց է արել իր գործունէութիւնը ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ, որտեղի կենտրոնական բաժինը, որը գտնվում է ԹԷՀՐԱՆՈՒՄ, կատարում է ամեն տեսակ բանկային օպէրացիաներ:

Յիշեալ բանկի ագէնտը կովկասում

10—10

ԲՈՒՐԳՀԱՐՏ և ԸՆԿ.

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի իմ թարգմանած՝

„ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ“

հեղ. պրոֆէսոր Ա. Գաբրիէլլի

Թէև ցանկութիւնս էր, ինչպէս և յայտարարել էի, մինչև սեպտեմբերը լոյս ընծայել աշխատութիւնս, բայց ինձանից անկախ պատճառով, չը կարողացայ ժամանակին կատարել խոստումս: Ուստի ներողութիւն խնդրելով յարգելի բաժանորդներից, խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, բարեհաճեն ուղարկել բաժանորդաթերթը և դրամը հետևեալ հասցէով. Тифлисъ. учителю Арм. Дух. Семинаріи Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцу.

Գրիգոր Շահբուդաղեան

Дозволено цензурою, Тифлисъ 31 Декабря 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.